10741

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«12» 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0143-21

Ձեռնարկողը՝ ***Դավիթ Աղաբեկյան***
ՀՀ, ք. Երևան, Ալմա-Աթա 2/1

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Ուլնեցի փողոց 45/5 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի փողոց 45/5 հասցե

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0143-21
<12> 08 2021թ.

Քաղաքացի Դավիթ Աղաբեկյանի կողմից ներկայացված, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Ուլնեցի փողոց 45/5 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Դավիթ Աղաբեկյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Ուլնեցի փողոց 45/5 հասցե

Ներածական մաս Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բազմաբնակարան բնակելի համալիր:

Համալիրի կառուցման նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, Երևանի քաղաքապետարանի կողմից 17.03.2021թ. տրված N 01/18-07/1-Ա-2692-150 ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն): Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

- Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 2500 ք.մ,
- Կառուցապատման մակերեսը՝ 1500 ք.մ (60 %),
- Կանաչապատման մակերեսը՝ 1000 ք.մ (40 %),
- Բնակարանների քանակը՝ 94 բնակարան,
- Ստորգետնյա ավտոկայանատեղիների քանակը՝ 104 կայանատեղ:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են հետևյալ շերտերը՝

Շերտ-1՝ լիցքային գրունտներ,

Շերտ-2՝ ներկայացված են խճաքարերով, որոնք հիմնականում տարածված են նախագծվող շենքի հարավային մասում, որոնց հզորությունը տատանվում է 2.2÷5.0մ,

Շերտ-3՝ ներկայացված են բազալտներով, տարածված են ամբողջ տեղամասով, որոնց հզորությունը տատանվում է 1.0÷10.5մ,

Շերտ-4՝ խարամ կարմրավուն, խճաքարային, մինչև 20% ավազային լցանյութով, տարածված է ամբողջ տեղամասով, հզորությունը տատանվում է 0.7÷4.6մ:

Գրունտային ջրերը հետազոտվող տարածքում բացակայում են:

Տեկտոնական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է ծալքավորված ապարների զոնայում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզի տեղամասը գտնվում է երրորդ սեյսմիկ զոնայում, 9 և ավելի բալ ֆոնային սեյսմիկությամբ MSK-64 սանդղակով, արագացումը Amax=0,4g (ՀՀՇՆ II- 2.02-94):

Նկարագրական մաս Նախատեսվող գործունեության տարածքը կառուցապատված է՝ առկա են ավտոտնակ, ինչպես նաև ինքնակամ շինություն, որոնք ենթակա են քանդման: Տրանսպորտային պայմանները ապառվվում են Ուլնեցի փողոցից: Կից գտնվում են Ուլնեցի փողոցը բազմաբնակարան բնակելի և հասարակական շենքեր: Մոտակա բնակելի հասարակական շենք շինությունները գտնվում են 15.5÷40մ հեռավորության վրա:

Բոլոր հեռավորությունները մոտակա շենք-շինություններից պատկերված են նախնական գնահատման հայտում (այսուհետ՝ Հայտ) ներկայացված հատակագիծ-սխեմայում:

Նախատեսվում է իրականացնել 17 հարկանի վերգետնյա և երկու հարկանի ստորգետնյա կառույց՝ կազմված 104 (48+56) ավտոկայանատեղ, պահեստային և տնտեսական և այլ տարածքներից: Առաջին հարկում նախատեվում է կազմակերպել առևտրի և հանրային սպասարկման տարածքներ անտրեսոլային հարկով: Երկրորդից վեցերորդ հարկերում նախատեսվում է գրասենյակային տարածքներ, իսկ 7÷17րդ բնակելի հարկերում՝ 2÷4 սենյականոց թվով 94 բնակարաններ: Սկսած 16րդ հարկից բնակարանները նահանջում են դեպի կենտրոն, ամեն հարկում ունենալով 6 բնակարան: Թվով 104 ստորգետնյա և 7 բացօթյա կայանատեղիներից 66-ը նախատեսվում է 98 բնակարանների (70% ապահովվածությամբ), իսկ մանացած 32–ը գրասենյակային և առաջին հասարակական հարկի սպասարկման համար: Հարկերը միմյանց հետ հաղորդակցվում են սանդղավանդակային հանգույցներով և վերելակներով: Տանիքը հարթ է՝ տեխնիկական և սպասարկման սենքերով,կանաչ հատվածներով, դեկորատիվ շվաքարաններով որպես հանգստի դիտահարթակ օգտագործման հանարավորությամբ:

Ճակատների արտաքին հարդարումը նախատեսվում է ցոկոլային նիշում բազալտե և գրանիտե, իսկ զերոյականից բարձր նիշում տրավերտինե և սև գույնի տուֆի երեսապատման սալերով: Հողամասի չկառուցապատված մասը նախատեսվում է բարեկարգել հետիոտն անցումներով, մեքենաների մոտեցումներով, ժամանակավոր կայանատեղիներով, ինչպես նաև կանաչ տարածքներով, զրուցարաններով և խաղասարքերով:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է: Ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում և կանաչապատում: Բարեկարգման և կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի բազմաբնակարան բնակելի համալիրի տարածքի բարեկարգման, արդիականացման կանաչապատման նախագիծ, որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, որի տեսակային և քանակական կազմը ստորև բերված է՝

- թխկի կարմիր՝ 8 հատ,
- լաբորնում անագիրատերև՝ 2 հատ,
- իլենի՝ 20 հատ,
- կատալպա՝ 4 հատ,
- սյունաձև թույա՝ 12 հատ,
- ասպիրակ՝ 22 հատ,
- ֆորզիցիա՝ 18 հատ:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 200 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից /պայմանագրային հիմունքներով/:

Շենքի ջեռուցումն ու օդափոխությունը նախատեսվում է ինչպես տանիքում տեղադրվող չիլլերի, այնպես էլ բնակարանների առանձին օդորակիչների սպասակմամբ վերջիններիս արտաքին բլոկները պատշգամբներում մետաղական ցանցազամբյուղներում սքողմամբ:

Նախագծվող համալիրի պահանջվող սանիտարա-հիգիենիկ պայմանները ապահովելու համար նախատեսված է իրականացնել բնական արտածում և մեխանիկական դրդմամբ օդի ներածում և արտածում:

Ավտոկայանատեղերում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար:

Բնակարաններում օդի արտածումը իրականացվում է սանհանգույցներից և խոհանոցներից, իսկ ներածումը իրականացվում է պատուհանների միջոցով: Սանհանգույցներում նախատեսված են առանցքային օդամղիչներ: Խոհանոցներում նախատեսված են օդահեռացման երկու առանձին համակարգեր, մեկը՝ բնական, մյուսը՝ մեխանիկական:

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲ ընկերության կողմից 27.07.2020թ.-ին տրված N ԱՇ/12901 տեխնիկական պայմանի, ինչպես նաև գործող նորմերի և կանոնների համաձայն:

Ջրամատակարարումը կիրականացվի՝ միանալով Կարապետ Ուլնեցի փողոցով անցնող D=250մմ ջրագծից, իսկ կոյուղին՝ Ուլնեցի փողոցով անցնող D=300 մմ կոյուղատարին, հեղեղատարը Դավիթ Անհաղթի փողոցով անցնող D=700 մմ հեղեղատարին:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կմատակարարվի պայմանագրային հիմունքներով, ավտոցիստեռներով՝ Երևան քաղաքի տեխնիկական ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում:

Բազմաբնակարան բնակելի համալիրի էլեկտրամատակարարումը իրականացվելու է համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից 19.02.2021թ.-ին տրված N ՏՊ-ՃՀԱ-0.4/0045 տեխնիկական պայմանի, ինչպես նաև գործող նորմերի և կանոնների համաձայն /պահանջվող հզորությունը՝ 215 կՎԱ, սնող ցանցի լարումը՝ 6 կՎ/:

Բազմաբնակարան բնակելի համալիրի գազամատակարարումը իրականացվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից 30.07.2020թ.-ին տրված N 74 տեխնիկական պայմանի, ինչպես նաև գործող նորմերի և կանոնների համաձայն / գազամատակարարումը՝ P=0.3 ՄՊա ճնշման և Q=300 խ.մ/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել Երևան-1 ԳԲԿ-ն սնող Dպ-700 կողմնատար-գազատարի 5.9 կմ-ից/:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/ 31.5 տ, որը կհավաքվի աղբահավաք

կոնտեյներներում և կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից /պայմանագրային հիմունքներով/ և 2200 խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, այդ թվում տարածքում առկա շինությունների քանդումից առաջացող, ամբողջությամբ տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

Շինհրապարակում շինաղբի կուտակումների կիրականացվեն հատուկ նախատեսված վայրում, անջրթափանց հարթակով և ծածկի տակ:

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 19000 խ.մ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 15200 խ.մ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 36,0 ամիս կամ 3 օրացուցային տարի՝ շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը կազմակերպվելու է բացառապես բազմաբնակարան բնակելի համալիրի տարածքի սահմաններում:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:
- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման /ջրցանի համար ջրի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար/, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Շին. հրապարակում նախատեսվում է տեղադրել կոնտեյների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի սենյակ, հանդերձարան, պահակատնակ, բուֆետ, ինչպես նաև բիոզուգարաններ և փակ պահեստ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողության իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով և կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտանետումներից:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով, լուսավորել տարածքը, տեղադրել պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի համաձայնեցմանը,
- նախատեսվող նոր կանաչապատվող տարածքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ,
- կանաչապատ տարածքների ոռոգման համար ջրամատակարարման աղբյուր կհանդիսանա հարևանությամբ անցնող ոռոգման ցանցը /պայմանագրային հիմունքներով/,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերումներ:

Բազմաբնակարան բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, Nox և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
3. Աղմուկի, թրթռումների և տատանումների մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:
5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում՝ 1960000 դրամ:

Պատճառաբանական մաս Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Պաշտպանության», «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,

- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված բազմաբնակարան բնակելի համալիրի տարածքի բարեկարգման, արդիականացման կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

6. Վերջնական նախագծում նախատեսել հրդեհաշիջման համար անհրաժեշտ հակահրդեհային պաշարապահ ծավալներ, քանի որ, համաձայն «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲ ընկերության կողմից 27.07.2020թ.-ին տրված N ԱՇ/12901 տեխնիկական պայմանի՝ ընկերությունը կապահովվի միայն խմելու-տնտեսական պահանջներին համապատասխան ջրաքանակները:

7. Վերջնական նախագծում հաշվի առնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից 19.02.2021թ.-ին տրված N ՏՊ-ՃՀԱ-0.4/0045 տեխնիկական պայմանի 2-րդ և 3-րդ կետերի պահանջները:

8. Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 2 հավելվածի 13-րդ և 15.1-րդ կետերի՝ բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագիծը ենթակա է պետական համալիր փորձաքննության:

9. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Երևան քաղաքի, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Ուլնեցի փողոց 45/5 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Վ. Վարդանյան

Ընդամենը՝ 7 էջ